ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/14

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Սեկո Պրինտ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Հ. Օհանյանի (լիազորագիր՝ տրված 27.01.2022թ.)

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի լիազորված ներկայացուցիչ Վ. Մանուկյանի (լիազորագիր՝ տրված 14.02.2022թ.),

քննելով «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Սեկո Պրինտ» ՍՊԸ-ի կողմից 31.01.2022թ. ներկայացված (01.02.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/14 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Սեկո Պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Սեկո Պրինտ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 31.01.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«*Գործի նախապատմությունը.*

13.12.2021.-ին «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Պատվիրատու) «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա թղթային եղանակով հայտարարել է ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի գնման առարկան էր տպագրական աշխատանքների ձեռքբերումը (այսուհետ՝ Աշխատանքներ): 13.12.2021.-ին Ընթացակարգը հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետ՝ Տեղեկագիր):

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ Աշխատանքների ԳՄԱ (CPV) ծածկագրերն են 79810000 իսկ ձեռքբերման Աշխատանքները հետևյալն էին՝

300 000 հատ սեզոնային գրիպի դեմ կանխարգելիչ պատվաստումների վերաբերյալ թռուցիկների տպագրում,

300 000 հատ սեզոնային գրիպի դեմ կանխարգելիչ պատվաստումների վերաբերյալ բուկլետների տպագրում,

(…),

1 000 000 հատ (COVID-19) դեմ կանխարգելիչ պատվաստումների վերաբերյալ թռուցիկների տպագրում,

1 000 000 հատ կորոնովավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ կանխարգելիչ պատվաստումների վերաբերյալ բուկլետներ,

(…):

Ընթացակարգի արդյունքում, վերոնշյալ՝ 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված Աշխատանքների մասով, 05.01.2022թ-ին Պատվիրատուի և Ընկերության միջև կնքվել է թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99 ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագիրը կնքվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որի շրջանակներում սույն բողոքը ներկայացնելու պահի դրությամբ դեռ ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքվել: Սակայն, 24.01.2022թ-ին Պատվիրատուն նույն Աշխատանքների ձեռքբերման վերաբերյալ հայտարարել է թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108 ծածկագրով նոր գնման ընթացակարգ, որը մեր կարծիքով միտված է Ընկերությանը թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99 ծածկագրով գնման գործընթացից արհեստականորեն դուրս թողնելուն:

Բողոքի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

13.12.2021.-ին Աշխատանքների ձեռքբերման նպատակով թղթային եղանակով հայտարարված Ընթացակարգի արդյունքում Պատվիրատուի և Ընկերության միջև 05.01.2022թ.-ին կնքվել է Պայմանագիր: Պայմանագիրը կնքվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

24.01.2022թ-ին Պատվիրատուն նույն Աշխատանքների (նույն քանակով և նույն անուններով) ձեռքբերման վերաբերյալ հայտարարել է թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108 ծածկագրով գնման ընթացակարգը, որի հայտերի բացման նիստը նշանակված է 31.01.2022թ-ի ժամը 10:00-ին: Այդ ընթացակարգի հրավերի և հայտարարության տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 29.12.2022 թվականի որոշմամբ: Պայմանագրով սահմանված աշխատանքները նույն քանակով և նույն տեխնիկական բնութագրով՝ նույնությամբ սահմանված են հիշյալ գնման ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններում:

13.12.2021թ.-ից (ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99 ընթացակարգը հրապարակելու պահից) մինչև 30.12.2021թ.-ն (ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108 ընթացակարգի հրավերի և հայտարարության տեքստը հատատելու պահը) ընկած ժամանակահատվածում Տեղեկագրում հրապարակված 2021 թվականի գնումների պլանում և 05.01.2022 թ.-ից մինչև սույն բողոքը ներկայացնելու դրությամբ Տեղեկագրում հրապարակված 2022 թվականի գնումների պլանում Աշխատանքները ներառված են այն քանակներով և անվանումներով, որոնցով հայտարարվել է թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99 ծածկագրով Ընթացակարգը, որի արդյունքում կնքվել է Պայմանագիրը: Այսինքն՝ թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ձեռքբերման ենթակա Աշխատանքները Տեղեկագրում հրապարակված գնումների պլանում ներառված չեն:

Թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը և հայտարարությունը առանց Տեղեկագրում հրապարակելու՝ Պատվիրատուն 25.12.2021թ.-ին vahan.manukyan@ncdc.am էլեկտրոնային փոստից ուղարկել է սահմանափակ թվով մասնակիցների: Այդ ժամանակ ուղարկված հրավերի համաձայն՝ հայտերի բացման նիստը նշանակված էր 05.01.2022թ.-ի ժամը 10:00-ին: Նշյալ ընթացակարգին մասնակցել են թվով 3 մասնակից, հայտերի բացման նիստի վերաբերյալ կազմվել է 05.01.2022թ.-ի թիվ 2 արձանագրությունը, սակայն հայտերի բացման նիստի հաջորդ օրը, 06.01.2022թ.-ին գնահատող հանձնաժողովի քարտուղարը զանգում է Ընկերություն և հայտնում, որ հրավերը չեղյալ է հայտարարվել, քանի որ այն Տեղեկագրում չի հրապարակվել:

25.01.2022թ.-ին Ընկերությունը դիմելով Պատվիրատուին խնդրել է հիմնավորել, թե ինչով է պայմանավորված արդեն իսկ կայացած և հաղթող մասնակից ունեցող մրցույթը նորից հայտարարելը: Պատասխանը չստանալով՝ Ընկերությունը 26.01.2022թ.-ին ևս մեկ անգամ դիմել է Պատվիրատուին խնդրելով պատասխանել 25.01.2022թ.-ի գրությանը, որից հետո 26.01.2022թ.-ին Պատվիրատուն պատասխանում է, որ «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99», և «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» մրցույթները հայտարարելիս ՀՀ ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ-ի նպատակներն բխում է Օրենքի 3-րդ հոդվածից և միտված են ապահովել գնումների գործընթացում իր կարիքներին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ ինչպես նաև ապահովել տնտեսող, և արդյունավետ գնումներ, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Բողոքի հիմքերն ու հիմնավորումները.

Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով սահմանված է, որ տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն. «4. Գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝ 1) գնումների պլանավորում. 2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը). 3) պայմանագրի կնքում. 4) պայմանագրի կատարում և կառավարում:»:

Կարգի 16-րդ կետի համաձայն. «16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, (...)»

Կարգի 17-րդ կետի համաձայն. «17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:»:

Կարգի 20-րդ կետի համաձայն. «20. Գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝ 1) պատասխանատու ստորաբաժանում, և 2) գնումները համակարգող 3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց: (...)»

Կարգի 21-րդ կետի համաձայն. «21. Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ 1) կազմում և հաստատում է գնման հայտը, (...)»:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ պետական գաղտնիք չպարունակող գնման գործընթացը սկսելու համար անհրաժեշտ է, որ պատվիրատուն ունենա տվյալ գնման գործընթացի շրջանակներում ձեռքբերման ենթակա գնման առարկան պարունակող, սահմանված պահանջներին համապատասխան հաստատված ու Տեղեկագրում հրապարակված գնումների պլան, ընդ որում՝ գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշմամբ: Այսպիսով, եթե նշյալ պահանջներին համապատասխանող գնումների պլանը Տեղեկագրում հրապարաված չէ, ապա պատվիրատուն իրավունք չունի սկսել տվյալ գնման գործընթացը: Քանի որ պետական գաղտնիք չպարունակող գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և Տեղեկագրում հրապարակված գնման առարկան պարունակող գնումների պլանի առկայությունն է: Հետևաբար, եթե գնման գործընթացը կազմակերպվել է առանց սահմանված պահանջներին համապատասխան հաստատված գնման առարկան պարունակող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակելու, ապա այդ գնման գործընթացը համարվում է կազմակերպված վերոգրյալ իրավական նորմերի խախտմամբ և առանց իրավական հիմքի, որպիսի պայմաններում այն չի կարող առաջացնել իրավաբանական հետևանքներ:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ձեռքբերման ենթակա աշխատանքները պարունակող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակված չէ: Ուստի կարող ենք փաստել, որ նշյալ ընթացակարգը կազմակերպվել է վերոգրյալ իրավական նորմերի խախտմամբ և առանց իրավական հիմքի, որպիսի պայմաններում կարծում ենք, որ թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108 ծածկագրով գնման ընթացակարգը նհրաժեշտ է հայտարարել չկայացած:

Բացի այդ, ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում Պատվիրատուն 05.01.2022թ.-ին արդեն իսկ Ընկերության հետ կնքել է Պայմանագիր, որտեղ ներառված են այն բոլոր աշխատանքները որոնց ձեռքբերման համար հայտարարվել է թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108 ծածկագրով գնման ընթացակարգը: Համադրելով նշյալ հանգամանքները կարծում ենք, որ Պատվիրատուն թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել է, որ Ընկերությանն արհեստականորեն դուրս թողնի թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99 ծածկագրով գնման գործընթացից, ինչը մեզ համար անհասկանալի է: Ընկերությանը թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99 ծածկագրով գնման գործընթացից արհեստականորեն դուրս թողնելու վերաբերյալ կարծիքին հանգեցնում է նաև այն, որ Պատվիրատուն թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108 ծածկագրով գնման ընթացակարգը առանց Տեղեկագրում հրապարակելու մեկ անգամ արդեն փորձել է կազմակերպել, որը գնահատող հանձնաժողովի քարտուղարի զանգի միջոցով հայտարարվել է չկայացած, բացի այդ, 25.01.2022թ-ի Ընկերության դիմումին 26.01.2022թ.-ին Պատվիրատուի տված պատասխանը նույնպես վկայում է, որ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է Ընկերության փոխարեն մեկ այլ ընկերության հետ պայմանագիր կնքելու նպատակով, քանի որ պատասխանով Պատվիրատուն անուղղակիորեն հաստատել է, որ այդ ընթացակարգով ձեռքբերման աշխատանքները նույնն են, ինչ Պայմանագրով սահմանվածը: Այսպես՝ ելնելով նշյալից կարող ենք արձանագրել, որ թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է այն նպատակով, որ Աշխատանքների ձեռքբերումը կատարվի այդ ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրով, այլ ոչ թե 05.01.2022թ.-ին Պատվիրատուի և Ընկերության միջև կնքված պայմանագրով, այսինքն փորձ է արվում աշխատանքների ձեռքբերումը իրականացնել մեր Ընկերությունից տարբերվող մեկ այլ ընկերությունից: Ուստի Պատվիրատուն ԳՀԱՇՁԲ-

ՀՎԿԱԿ-2021-108 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպել է խաթարելով Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 2-րդ մասի 1-ին կետի նորմերը, քանի որ նշյալ ընթացակարգը կազմակերպվել է Ընկերությանը գնման գործընթացից դուրս թողնելու համար, այլ ոչ թե Պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան Աշխատանքների ձեռքբերման նպատակով, որպիսի հանգամանքներում Ընկերությունը ենթարկվում է խտրականության, քանի որ փորձ է արվում մեր Ընկերությանը արհեստականորեն դուրս թողնել թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99 ծածկագրով գնման գործընթացից: Բացի այդ խաթարվում է Պայմանագրի և Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները այնքանով, որքանով այդ դրույթների ուժով Ընկերությունը ունի օրինական ակնկալիք առ այն, որ Պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Աշխատանքների ձեռքբերումն իրականացվելու է Ընկերությունից, քանի որ Աշխատանքների կատարման Պայմանագիրը Պատվիրատուն կնքել է Ընկերության հետ:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով Օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածներով՝ խնդրում ենք՝ պարտավորեցնել 24.01.2022թ.-ին հրապարակված թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած»:

Ի լրումն բողոքի Ընկերությունը 16.02.2022թ. գրությամբ փոփոխություն է կատարել բողոքի պահանջում հայտնելով հետևյալը.

«պարտավորեցնել 24.01.2022թ-ին հրապարակված թիվ ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը (հրավերին կից պայմանագրի նախագծի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով) հայտարարել չկայացած»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.02.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը 04.02.2022թ. թիվ ԱՎ/01/08/46-22 գրությամբ հայտնել է հետևյալը

«Ի պատասխան Ձեր՝ 2022 թվականի փետրվարի 02-ի թիվ 11/1422-22 ծանուցման ներկայացնում եմ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) դիրքորոշումը «Սեկո Պրինտ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 31.01.2022թ. ներկայացված բողոքի վերաբերյալ:

«ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ընթացակարգի արդյունքում մրցույթում ներառված 6 չափաբաժիններից Ընկերության հետ 05 հունվարի 2022 թ. կնքվել է «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» տպագրական աշխատանքների կատարեան պայմանագիր մրցույթի հրավերի 1, 2, 4 և 5 չափաբաժիններով, այլ ոչ թե 1-5 չափաբաժիններով, ինչպես նշված է բողոքում: «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստի ընթացքում մեր կողմից թույլ տրված անփութության հետևանքով մեկ մասնակցի կողմից ներկայացված ծրարը չի բացվել, ինչը արձանագրվել և հրապարակվել է: Հիմք ընդունելով «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով գնման ընթացակարգի 2021 թ. դեկտեմբերի 22-ին կայացած բանակցություններում Ընկերության կողմից առաջարկված գները, 2021 թ. դեկտեմբերի 24-ի հրապարակված գնումների պլանում տեղադրել է 1, 2, 4 և 5 չափաբաժինների միավորի գները (առանց ընդհանուր արժեքների):

Այնուհետև, հաշվի առնելով «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով մրցույթի բացման նիստի ժամանակ մասնակից ընկերության կողմից ներկայացված ծրարի բացված չլինելու փաստը, բոլոր հնարավոր մասնակիցների գնային առաջարկները ներգրավելու նպատակով Պատվիրատուն որոշել է ևս մեկ անգամ իրականացնել վերոհիշյալ մրցույթում ընդգրկված գնման առարկաների գնման գործընթաց: Գնումների պլանում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի եղել: 2022 թվականի դեկտեմբերի 29-ին Պատվիրատուն հաստատել է «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեքստը: «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» գնման ընթացակարգում ընդգրկվել են 6 չափաբաժիններով նույն գնման առարկաները, որոնք ներառված են եղել «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» գնման ընթացակարգում: Տեխնիկական պատճառներով: 2022 թ. դեկտեմբերի 29-ին «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» մրցույթի հրավերը սահմանված կարգով չի հրապարակվել, այլ հրապարակվել է 2022 թ. հունվարի 24-ին: «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» գնման ընթացակարգում ընդգրկված գնման առարկաները ներառվել են Պատվիրատուի 2022 թ. հունվարի 5-ի հրապարակված գնումների պլանում 1, 2, 4 և 5 չափաբաժինների միավորների գներով:

«ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» գնման ընթացակարգի բոլոր հայտարարությունները, այդ թվում նաև տեխնիկական պատճառներով սահմանված կարգով չհրապարակվածը, ծանուցվել են Ընկերությանը էլեկտրոնային փոստով:

«ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» գնման ընթացակարգում 1, 2, 4 և 5 չափաբաժինների մասով նախահաշվային գներից ցածր գնային առաջարկ ստանալու դեպքում Պատվիրատուն պաշտոնապես կդիմի Ընկերությանը, «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» գնման պայմանագրում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկով:

Այսպիսով, «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» գնման ընթացակարգը կազմակերպելով Պատվիրատուն նպատակ ունի ապահովել գնումների գործընթացում իր կարիքներին համապատասխան աշխատանքների արդյունավետ գնումներ մասնակիցների հնարավորինս լայն շրջանակի ընդգրկմամբ:

Կից ներկայացնում եմ ԳԲՔԱ-ՆԳ-2022/14 բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.02.2022թ. ժամը 09:30-ին և 15.02.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 15.02.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով մասնավորապես հայտնել է հետևյալը.

««ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով ընթացակարգի արդյունքում ընթացակարգում ներառված 6 չափաբաժիններից Ընկերության հետ 05.01.2022թ. կնքվել է «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» տպագրական աշխատանքների կատարման պայմանագիր ընթացակարգի հրավերի 1, 2, 4 և 5 չափաբաժինների մասով:

Սակայն, հաշվի առնելով «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստի ընթացքում Պատվիրատուի կողմից թույլ տրված անփութությունը, որի հետևանքով մեկ մասնակցի կողմից ներկայացված ծրար չի բացվել, Պատվիրատուն որոշել է՝ բոլոր հնարավոր մասնակիցների գնային առաջարկները ներգրավելու նպատակով, ինչպես նաև գալով այն համոզման, որ հնարավոր է նախահաշվային գնից ավելի ցածր գին ստանալ, ևս մեկ անգամ «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» մրցույթում ընդգրկված նույն գնման առարկաների մասով (նույն քանակներով) 24.01.2022թ. հայտարարել «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» ծածկագրով նոր գնման ընթացակարգ»:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2022/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. 05.01.2022թ. www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու՝ Տեղեկագիր) հրապարակված՝ կնքված պայմանագրի մասին հայտարարության համաձայն՝ տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Սեկո Պրինտ» ՍՊԸ-ի միջև 05.01.2022թ. կնքվել է տպագրական աշխատանքների կատարման պայմանագիր:

2. 24.01.2022թ. Տեղեկագրում հրապարակված հայտարարության համաձայն՝ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

3. «Սեկո Պրինտ» ՍՊԸ-ն 31.01.2022թ. ներկայացված բողոքով մասնավորապես վիճարկում է այն փաստը, որ «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով ընթացակարգի արդյունքում 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններով նախատեսված աշխատանքների մասով 05.01.2022թ.-ին Պատվիրատուի և Ընկերության միջև կնքվել է թիվ «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով պայմանագիր, որը կնքվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և սույն բողոքը ներկայացնելու պահի դրությամբ դեռ ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքվել: Սակայն, 24.01.2022թ.-ին Պատվիրատուն նույն աշխատանքների ձեռքբերման վերաբերյալ հայտարարել է թիվ «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» ծածկագրով նոր գնման ընթացակարգ, որը Ընկերության կարծիքով միտված է Ընկերությանը թիվ «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով գնման գործընթացից արհեստականորեն դուրս թողնելուն:

4. Պատվիրատուի ներկայացուցիչը բողոքի քննության նպատակով 15.02.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի ընթացքում ներկայացված բողոքի վերաբերյալ մասնավորապես հայտնել է հետևյալը.

««ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով ընթացակարգի արդյունքում ընթացակարգում ներառված 6 չափաբաժիններից «Սեկո Պրինտ» ՍՊԸ-ի հետ 05.01.2022թ. կնքվել է «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով տպագրական աշխատանքների կատարման պայմանագիր ընթացակարգի հրավերի 1, 2, 4 և 5 չափաբաժինների մասով:

Սակայն, հաշվի առնելով «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստի ընթացքում Պատվիրատուի կողմից թույլ տրված անփութությունը, որի հետևանքով մեկ մասնակցի կողմից ներկայացված ծրար չի բացվել, Պատվիրատուն որոշել է՝ բոլոր հնարավոր մասնակիցների գնային առաջարկները ներգրավելու նպատակով, ինչպես նաև գալով այն համոզման, որ հնարավոր է նախահաշվային գնից ավելի ցածր գին ստանալ, ևս մեկ անգամ «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» մրցույթում ընդգրկված նույն գնման առարկաների մասով (նույն տեխնիկական բնութագրով և քանակներով) 24.01.2022թ. հայտարարել «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» ծածկագրով նոր գնման ընթացակարգ»:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Սեկո Պրինտ» ՍՊԸ-ի 31.01.2022թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 04.02.2022թ. թիվ ԱՎ/01/08/46-22 գրությունը, գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Այսպես, 05.01.2022թ. Տեղեկագրում հրապարակված՝ կնքված պայմանագրի մասին հայտարարության համաձայն՝ տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Սեկո Պրինտ» ՍՊԸ-ի միջև 05.01.2022թ. կնքվել է տպագրական աշխատանքների կատարման պայմանագիր:

24.01.2022թ. Տեղեկագրում հրապարակված հայտարարության համաձայն՝ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

«Սեկո Պրինտ» ՍՊԸ-ն 31.01.2022թ. ներկայացված բողոքով մասնավորապես վիճարկում է այն փաստը, որ «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով ընթացակարգի արդյունքում 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններով նախատեսված աշխատանքների մասով 05.01.2022թ.-ին Պատվիրատուի և Ընկերության միջև կնքվել է թիվ «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով պայմանագիր, որը կնքվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և սույն բողոքը ներկայացնելու պահի դրությամբ դեռ ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքվել: Սակայն, 24.01.2022թ.-ին Պատվիրատուն նույն աշխատանքների ձեռքբերման վերաբերյալ հայտարարել է թիվ «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» ծածկագրով նոր գնման ընթացակարգ, որը Ընկերության կարծիքով միտված է Ընկերությանը թիվ «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով գնման գործընթացից արհեստականորեն դուրս թողնելուն:

Պատվիրատուի ներկայացուցիչը բողոքի քննության նպատակով 15.02.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի ընթացքում ներկայացված բողոքի վերաբերյալ մասնավորապես հայտնել է հետևյալը.

««ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով ընթացակարգի արդյունքում ընթացակարգում ներառված 6 չափաբաժիններից «Սեկո Պրինտ» ՍՊԸ-ի հետ 05.01.2022թ. կնքվել է «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով տպագրական աշխատանքների կատարման պայմանագիր ընթացակարգի հրավերի 1, 2, 4 և 5 չափաբաժինների մասով:

Սակայն, հաշվի առնելով «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստի ընթացքում Պատվիրատուի կողմից թույլ տրված

անփութությունը, որի հետևանքով մեկ մասնակցի կողմից ներկայացված ծրար չի բացվել, Պատվիրատուն որոշել է՝ բոլոր հնարավոր մասնակիցների գնային առաջարկները ներգրավելու նպատակով, ինչպես նաև գալով այն համոզման, որ հնարավոր է նախահաշվային գնից ավելի ցածր գին ստանալ, ևս մեկ անգամ «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» մրցույթում ընդգրկված նույն գնման առարկաների մասով (նույն տեխնիկական բնութագրով և քանակներով) 24.01.2022թ. հայտարարել «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» ծածկագրով նոր գնման ընթացակարգ»:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» և «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» ծածկագրերով գնման ընթացակարգերը, Պատվիրատուի գործողությունների իրավաչափությունն՝ ուղղված «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով ընթացակարգում ընդգրկված նույն գնման առարկաների մասով 24.01.2022թ. «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» ծածկագրով նոր գնման ընթացակարգ հայտարարելուն, այն պայմաններում երբ առկա է կողմերի միջև 05.01.2022թ. կնքված «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» պայմանագիր, հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ***գնումը պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն է:***

Նույն հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ ***գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն***, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգի արդյունքում կնքվում է պայմանագիր:

Այսպիսով՝ համապատասխան ընթացակարգային կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Հաշվի առնելով գնման գործընթացի կարևորությունը, ինչպես նաև ոչ միայն պատվիրատուի, այլ նաև մասնակիցների՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով

երաշխավորված իրավունքներն ապահովելու անհրաժեշտությունը՝ օրենսդիրը սահմանել է գնման ընթացակարգը կազմակերպելու հստակ գործընթաց՝ նախատեսելով նաև գնման գործընթացի համար պատասխանատուներին, վերջիններիս գործառույթները և գնման գործընթացը կազմակերպելու, ինչպես նաև դրա արդյունքում պատվիրատուի հատուցմամբ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու պայմանները:

Այսպիսով՝ վերոնշյալ իրավական կարգավորումները և փաստական հանգամանքները համադրելով Պատվիրատուի գործողությունների հետ՝ հարկ եմ համարում արձանագրել, որ արդեն իսկ կնքված պայմանագրում ընդգրկված գնման առարկաների մասով կրկին գնման ընթացակարգ հայտարարելու կարգավորում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ, հետևաբար գտնում եմ, որ «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» ծածկագրով գնման ընթացակարգը «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-99» ծածկագրով կնքված պայմանագրում ընդգրկված չափաբաժինների մասով պետք է հայտարարվի չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Սեկո Պրինտ» ՍՊԸ-ի կողմից 31.01.2022թ. ներկայացված բողոքը բավարարել՝ պարտավորեցնել «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-108» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**